

891.79

4-62



ՅՅՂ. ԴԳ-Յ

Կ-59

1184

II

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վ. ՎԻՆՆԻՉԵՆԿՈ

# Մ Օ Մ Ե Ն Տ

ՊԱՏՄՈՒԱԾՔ՝ ԲԱՆՏԱՅԻՆ ՆԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐԻՑ

Ռուսերէնից Թարգմանից

Զ Ե Ի Լ Ս Լ

1913

Տպարան Փեթր. Կ

ԿԻՐՍՈՆ



27

1484

„ՋԱՐԹՈՆՔ” ԳՐԱԴԱՐԱՆ — № 1

891.79  
Վ-62

այ.

Վ. ՎԻՆՆԻՉԵՆԿՈ

Ստացված է 1942 թ. 11 ամի 15 օրը  
Կ. Վեյսեր

# Մ Օ Մ Ե Ն Տ

(ՊԱՏՄԱԾՔ՝ ԲԱՆՏԱՅԻՆ „ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐԻՑ”)

6104

Ռուսերենից թարգմանից  
Զ Ո Ւ Լ Ա Լ



✦ Տպարանի Փեթակ ✦  
ԿԻՐԱՍՈՆ



12 .08. 2013

15,630



ՏՊԱՐԱՆ ՓԵՏԱԿ

Կիրառնի

№ 4



ՆԲԵՐ

Ս. - ԻՆ

Զ. - ԽԳ

Մի անգամ Շեխերազամն այսպէս սկսեց իր պատմութիւնը

— «Լսեցէ՛ք ! : Այս դէպքը պատահեց գարնան ժամանակ : Դուք դեռ յիշու՞մ էք թէ ինչ բան է գարունը : Վերջիչում էք անշուշտ երկինքը—կապոյտ, խորունկ ու բարձր ! : Յիշում էք-թէ ինչքան քաղցր է պառկել մարգագետնի վրայ, ձեռները գլխատակին դրած ու նայել երկնքին, գարնանային անտէշ երկնքին : Է՛՛ն ! . . . : Գարուն էր, որ այս դէպքը պատահեց : Իմ շուրջը տաքածուղ դաշտը չճնչում էր, փայփայում ու համբարւում . . . : Ո՞ւմ հետ :

Հէ՛յ, երկնքի, հովի, արեգակի հետ : Ամբողջ դաշտը բուրում էր դալարութիւն, վերածնութիւն, չարժման երջանկութիւն ու կենսունակութիւն : Մի խօսքով՝ իսկական գարուն էր :

Իսկ ես, յարգելի պարոններ, իմ ուղեցոյց Սիմօն Պուստունի հետ գնում էի դէպի սահմանադուխ : Նա մաքսանկնդ էր ու սահմանից փախտական մարդ անցկացնող : Ես անհրաժեշտ կերպով հէնց նոյնօրն իսկ—առանց գիշերւան սպասելու սէտք էր անցկենայի սահմանապրուխը : Բայց երբ իմ այս մտադրութիւնը յայտնեցի Սիմօնին, նա լուռ ու անզգայ դէմքով նայեց ինձ, առանց ծիծաղելու շուռ եկաւ ձիաների կողմը ու գայրացած գոչեց .

— Հայտէ՛ : Հը՛ր՛

Պէտք է ասել, որ Սիմօնը, չնայած իր կոչման, բաւական լուրջ մարդ էր և չէր սիրում խզուր տեղ խօսք փչել : Նա «ջահէլ», սուղջ և ինչպէս իր համա-

զիզացիներն էին ասում «ոսգմիկ» մարդ էր, և ս'յդ էր պատճառը, որ նա միշտ և ամէն բանի վրայ հայում էր վերուից—դէպի ցած: Նա քայլում էր դանդաղ, ծանր, բայց ինքնավստահ և եթէ նոյնիսկ «խարցիզները» նրան ձերբակալեն, նա դարձեալ չի այլայլում, միայն դէմքը աստիկ մուսլում է, աչքերը փոքրանում են, ու հայւածքը դառնում խայթող և շրթունքները սաստիկ սովորենում:

— Սիմոն! ձիւնն ասած ես անպատճառ, այսօր իսկ պիտի անցնեմ սահմանագլուխը, հասկացա՛ր: Արդէն դու գիտես որ... — կրկնեցի և ողբերկում:

Կառապան Սիմոնը ուշադրութիւն իսկ չդարձրեց իմ խօսքերին: Նրա խոշոր կոնակին վրայ նստել էին փոքրիկ, փայլուն և գոնդգոյն բազմաթիւ ճանձեր: Երբ նա որեէ ուժգին շարժում էր անում, նրանք վեր էին թռչում արագութեամբ ու ճախրում նրա կոնակի չորս կողմը, ինչպէս ծովի երևաին, ուրուրները ժայռերի վրայ: Յետոյ դարձեալ նստում էին, բայց նստում էին այնպիսի անսովոր անշարժութեամբ, որ կարծես թէ ուղղակի ինձ նայելիս լինեն:

— Կարող են սպանել քեզ, — կոշտութեամբ մտաւայ կառապան Սիմոնը՝ մօտ տառը վերտ ճանապարհ գնալուց վերջ և ձիւրի սանձափոկերը նստարանի երկաթին ամրացնելով՝ պատրաստեց սիկար փաթաթելու:

— Պատահել են այդպէս դէպքեր—հարցրի ևս:

Սիմոնը չտապեց պատասխանել: Սիկառի թղթից մի թերթիկ պոկեց ու գրպանեց ծխախոտ հանեց:

— Ի հարկէ պատահել են...: Մի՞թէ մարդ սպանելու համար չատ խելք է հարկաւոր...:

— Բայց պատահել է դէպք որ չեն սպանել—հարցրի:

Սիմոնը լեզուի ծայրով թաց արեց սիկառի թղթի եզերքը, ողբեց — փաթաթեց սիկարը, ապա չրխկացրեց լուցկին, վառեց ու մի քանի անգամ խոր ծուխ քաշեց, յետոյ սանձափոկերը կրկին ձեռք առնելով պատասխանեց.

— Ինչո՞ւ չէ: Պատահել է դէպք, որ չեն կարողացել սպանել: Հօ!

— Է՛հ, հէնց էնպէս ինձ էլ չեն սպանի ու անվտանգ կ'անցնեմ... — վճռեցի:

Ու ես յանկարծ ընկայ Հախազանց ծիծաղելի դրութեան մէջ, երևակայելով ինքզինքս արդէն մեռած: Ահա Սիմոնի կոնակին նստած ճանձերը, ահա ձիւրը ու նրանց մէջքի վրայ յիմար ու միմտական ցատկատուկներ անող լծասարքի փոկերը, վերելի կողմը ձեղքւած Սիմոնի գլխարկը ու վերջապէս... Ես, այսինքն ես ինքըս—ապագայի մեռեալը: Եւ ահա ես կը ընկնեմ որեէ տեղ վայրի ու անմարդարնակ մի ձորում, իմ վերել երկկնքը ու քունքիս վրայ մի փոքրիկ սև վէրք, իսկ վէրքի բոլորակները շրջանակի կը դիզւեն, կը հաւաքւեն հէնց սրանց նման փայլուն, կանաչորակ ճանձեր, ու կարծես դուշախութիւններ կ'անեն դիտելով վէրքի ծակից ներս, ուր նստած կը լինի մահը: Ու իմ դէմքը ես կանաչաւուն, անլղայ... Իսկ մտտակայ որեէ ժայռի վրայ նստած կը լինեն խոշոր, սև ու խորհրդաւոր ազուականներ և կապանն ինչ— որ լանի...:

— Եթէ գլխիցդ ձեռք ես քաշել ուրեմն գնա՛—յանկարծ և անսպասելի կերպով մոլտաց Սիմոնը ու թափ տալովս սանձափոկերը դանդաղորէն ձայնեց ձիւրին.

— Հա՛յտէ հը՛ր... կուկուրուղեանա՛!... Ես ժպտեցի:

«Կուկուրուղեանա» կոչուող ձին սթափուեց ու ա-

կանջները լարելով քայլերն արագացրեց. բայց իսկոյն և եթ հանդարտելով սխեց դարձեալ մի տեսակ անտարրերութեամբ քաշել կառքը դէպի յառաջ :

Յիշում եմ : Սահմանագլխի այն զիւղը, դէպի ուր մենք գնում էինք, ինձ համար անսպասելի կերպով յանկարծ երևաց : Դեռ գիւղ չհասած, Սիմօնը չչէրանձ թէ ինչու, բարձրացաւ կանդնեց կառքի նստարանի վրայ ու խոր ուշադրութեամբ նայեց դէպի յառաջ ու ձիգ աչքով մարմինը, թիթե կերպով գլուխը դարձրեց ինձ, ձեռքը պարզեց յառաջ ու մտաաց :

— Ա՛յ, տե՛ս սահմանագլիծը :

Ես նայեցի այն կողմը, դէպի յառաջ : Հեռ՛ւ-հեռու սուերի նման մութ կերպով երևում էր մի անտառ : Կրճքիս տակ ինչ-որ ցուրտ սարսուռ մաղեց ու սիրտս կարծես թէ մտաւ : Ա՛յո՛ : Ա՛յսպէս ուրեմն, ա՛նա վերջ-ջապէս սահմանագլուխը : Ազանութեամբ ես դիտեցի այդ արևոտ դաշտը, որի եզերքին անկեղ էր ցցապատնէչի նման մի ինչ-որ բան, զգում էի, թէ ինչպէս հոգիս շնչում էր, իսկ ես ձանձրանում ու դառնում անհանդիստ :

— Դու ինձ այժմ և եթ կ'անցկացնես սահմանագլից չէ՞ Սիմօն—հարցրեցի ես :

Սիմօնը դէպի ինձ դարձրեց իր դեղին, թխագոյն սև քիթը, ծայրերը կարեամբ բեխերն ու ընկճեամ խօսեց :

— Ա՛յ թէ ինչ : Երևի դուք կարծում էք, թէ Սիմօնը արդէն շա՛տ է ապրել աշխարհում ու գլխիցը ձեռք քաշել այլևս. Հա՛ : Ի՛նչ է պատահել, դժւել եմ որ ձեզ օր-ցերեկով փախտատկան անցկացնեմ սահմանագլխից : Ա՛յ այդ անտառը տեսնո՞ւմ էք, ա՛յ այդ անտառում զինւորներ կան, եթէ ուղում էք նրանց

ձեռքն ընկնել—գացէք ուրեմն : Իսկ ինձ բարեհաճեցէք թող տալ մի քիչ էլ ապրել աշխարհում... :

Ակնյայտ էր, որ իմ գործը բոլորովին ձախորդ էր գնում, այնքան ձախորդ՝ որ նոյնիսկ Սիմօն Պուտուլնի նմար մարդը պերճախօսութեան դիմեց :

— Ուրեմն, ուղղակի դէպի անտա՞ռ պէտք է գնալ :

— Հա՛, ճիշտ և ճիշտ : Ուղղակի դէպի անտառ, զինւորների ճանկի մէջ :

Մենք անցանք ինչ որ մարզագետնից, բանջարանոցների կտուով : Ուռիները վար էին կախել մեր գլխների վրայ իրանց վարս-ձիւղերն ու չգիտեմ թէ ինչու ես խղճացի նրանց... այդ սիրուն. բարեհամբոյր, պարզ ու համեստ ուռեկներին :

Դաշտը ծածկեց մեր աչքերից ու նրա հետ անյայտացաւ նաև այն խորհրդաւոր ցանկապատը : Յանկարծ մենք կանգ առանք :

Սիմօնը լուռութեամբ վար իջաւ կառքից, մօտեցաւ ինձ ու կոպիտ դժգոհութեամբ դիտելով չրջակայքը մտաաց :

— Հը՞, ի՛նչ էք ասում, ուղո՞ւմ էք այժմ իսկ գնալ :

— Ա՛յո՛, հենց այժմ :

— Կ'ապանեն հա՛ :

— Չեն կարող սպանել :

— Դէ՛հ՛, որ այդպէս է, ամբողջովին պառկեցէք կառքի մէջ. բարկացած շիշտով հրահանգեց Սիմօնը :

Ես հնազանդութեամբ պառկեցի առանց իսկ հարցնելու պատճառը, ու իմ նայեամքը ուռեկներին հանդիպելիս ես դառն ժպտացի : Սիմօնը մի քանի հոտաւէտ վարունգներ քաղեց բանջարանոցից ու կառքի մէջ, իմ մօտ թագնեղուց յետոյ, խոշոր կտաւով ծածկեց երեսս

ու ամբողջ մարմինս, ու ինքը հեռացաւ: Քիչ վերջ ես գգացի թէ նա ինչպէս մազլոցն կառքի վրայ, կառքը ցնցեաց ու ճռճոաց: Սիւնը նստեց իր տեղում ու մենք չարժեցինք յառաջ: Ես պատկել-ձածկուել էի ու ոչինչ չէի տեսնում:

Հաւանականաբար մենք դարձեալ գնում էինք ճանապարհից դուրս, որովհետեւ մեր կառքը սկսեց օրօրօցի նման օրօրել ու ես լուում էի անիւների տակ կոտորուող-ճգմուղ խոտերի խշխշոցը, ձիերը յաճախ կանգնում էին երևի գետնից խոտ պոկելու համար: Ու յիշում եմ... երբ կառքն ինձ տարութեր ցնցում էր, ինձ թւում էր թէ ես արդէն մեռել-գիտակ դառել ու դիակս կառքի մէջ դրած՝ տանում են սահմանագլխից հեռի:

Երկար ժամանակ այդպէս գնում էինք ու ես հազիւ կարողանում էի նշմարել երեսիս վրայ ձածկւած մոխրագոյն կտաւը ճանկատող հասկերը: Վերջապէս ես լսեցի թէ ինչպէս Սիւնը ցած իջաւ կառքից ու ձիաները փոնչացին:

Մեր կառքը դարձեալ կանգնեց: Ես դէն չարտեցի ինձ ձածկող կտաւը ու յանկարծ աչքերիս երևաց անյատակ կապոյտ երկինքը ու նրա տակ այլանդակ ժայռի նման դուրս ցցւած Սիւնի գլխարկաւոր գլուխը: Նրա սրածայր և կարծես մեռելի քիթն ու ծայրերը կտրուած մութ-գորշագոյն բխիւրը, ասես մոխիր էին ցանկ նրանց վրայ:

—Վեր կաց! — մութաց նա: Ես ոտքի ելայ: Կառքը կեցել էր մի ինչ-որ մարագի առջև, որի հանդէպ բակի միւս կողմում, երեւում էր փոքրիկ, ախուր տեսքով մի խրճիթ ու դրանց մէջ տեղում—փողօցի վրայ բացուող բակի դուռը:

—Մորագում! — ասեց Սիւնը գլխի չարժումով մարագը ցոյց տալով. ու դիտեց չորս բոլորտիքը ուշադիր, մուռլ նայւածքով:

—Արձակեմ ձիերն ու տանեմ ձեզ—ասեց նա:

Ես էլ դիտեցի չորս կողմս, վար ցատկեցի դէպի մարագ: Բաց անելով դուռը ներս մտայ... ու անակնկալ տեսարանից քարացայ. գետին փուած յարդի վրայ, ձիշտ դրան դիմաց, նստել էր... երեւակայեցէք!... նստել էր մի օրիորդ. Մի իսկական քաղաքացի օրիորդ, չրջազգեստի տակից երեսացող գեղեցիկ կօշիկներով, ծղօտեայ գլխարկը ծնկներին ու աչքերը զարմանքով ինձ սեւեւած: Իսկ աչքերը, երկչոտ եղնիկների նման, պայծառ, յստակ ու խոշոր: Ծշմարիտն ասած ես գեղեցիկ օրիորդներից քաշուող չեմ. բայց մարագում, յայտնի դէպի վրայ, մաքսաննազ Սիւնի տան բակում... այդպիսի մի ազնկայ հանդիպումս ինձ գծեց քիչ ճնշւած ու շար պրոթեան մէջ:

—Կարելի է ներս մտնել—առանց այլևայլութեան մրմնջեցի ես: Աղջկայ աչքերը լայն-լայն բացեցին, յետոյ արագ կերպով շուռ եկան դէպի ինձ, դողդողացին ու կարծես չորս կողմ փոռեցին ձիծաղ ու քրքիջ:

—Օ՛, խնդրում եմ— պատասխանեց նա ու ձեռները վայելուջ կերպով պատեց իր չուրջը, յետոյ նոյնիսկ յարդի վրայ քիչ յառաջ չարժեց, կարծես թէ ինձ անկ բաց անելու համար: Իսկ աչքերը ժպտուն, հետաքրքիր նայում էին ինձ:

—Շնորհակալութիւն! — նոյնպէս ժպտով ասեցի ես: Եւ իմ տրամադրութիւնը յանկարծ դարձաւ ուրախ ու ազատ: Աննկատելի կերպով նայեցի ես նրան: Յարդի շուղերը նրա մոյզ-գոյն մազերի մէջ խճճել էին, ու

մանք ականջների մօտ վար կախել ու շարժւում-դող-դողում էին, նրա վարի շրթունքը—ինչպէս լինում է քմահաճոյքոտ ու սիրուն մանուկներին—քիչ դէպի յառաջ էր երկարել: Մարագում հազիւ թափանցում էր մութ-ազօտ լոյսը, խոնաւութիւնը բուրում էր ու բացի այդ, դեռ նոր մաշկած ու աղած կաշւի հոտ էր գալիս:

—Ընկեր! երեւի դժուր էլ դէպի սահմանադուխ էք գնում փախստական անցնելու համար, չէ՞ — հարցրեց նա:

—Գուշակեցիք, այո՛: Իսկ դժուր:

—Ե՛ս էլ:

Ու երկուսս էլ քրքչացինք, սակայն առանց հասկանալու թէ ինչու: Մի ծիծեռնակ թռաւ ծլւլաց ու դուրս թռաւ: Յիշում եմ. մարագի ինչ-որ մի անկիւնից լոյսի մի բարակ շերտ ներս էր սողոտկել մինչև գետին ու ոսկեղէն գաւազանի պատրանքն էր տալիս: Մարագի ետեւից լսում էր Սիմօնի կանչւոտոցը, կարծես թէ հայհոյում էր; հաւանականաբար ձիերին: Դռան ճեղքւածքից տեսնում էր թէ ինչքէս սև նետի նման թռչկոտում էին ծիծեռնակները: Մարագի մութ անկիւններից փչում էր մի տեսակ հինաւուրց վիշտ, ինչ-որ ցաւալի տիրութիւն: Մի ինչ-որ տեղից լսում էր սրտնեղած պիծակի տղոցը:

Յանկարծ բակից ներս մտաւ՝ մի գիւղացի, կանչեց Սիմօնին շուտով ու դադանի սկսեց խօսել. յաճախ նայւածքը մարագից ուղղելով դէպի դաշտն ու գիւղը: Սիմօնը ծոյլ-ծոյլ բազուկները վար կախած կանգնել ու լսում էր: Մենք էս լսեցինք:

Օրիորդը յանկարծ ինքնիրան նայեց ու ծիծաղեց:

Ա՛խ, եթէ գիտնայիք թէ նա ինչպէս էր ծիծաղում!, Իսկ ծիծաղը հոգւոյ հայելին է:

—Աստուած իմ,ինչպէս էլ զարդ արւել եմ! — բացականչեց նա և յանկարծ վեր ցատկելով տեղից, սկսեց թափ տալ յարդի շիւղերն իր վրայից, որոնք ոսկիզ արդարանքների նման նրա զգեստների բոլորտիքից կախւած տարուբեր շարժւում էին:

—Գիտէ՞ք, ևս արդէն երկու օր է որ, այս մարագում ընկել-մնացել եմ—ծիծաղելով խօսեց նա—այ՛, Աստուած վկայ: Ինչ-որ պատճառ կայ, որ արգելում է գնալ: Իսկ այստեղ լսւ է. ճշմարիտ կարծես հնդկական վրան լինի և կամ, ինչ անուն են տալիս հնդիկները վրանին: Բայց ինձ շատ դուր է գալիս: Ա՛խ ինչ-որ թախծութիւն է տիրում այստեղ: Սիմօնը ինձ համար կերակուրը այստեղ է բերում: Սակայն այս վիճակը արդէն սկսում է ձանձրանալի դառնալ: Դէ՛հ, ոչինչ, այսօրեհետե միտաին կը ձանձրանանք: Այնպէս չէ՛: Հա՛, լսեցէք, բայց ինչ էք կանգնել, մաքրեցէ՛ք այս յարդի շիւղերն իմ վրայից: Ինչ դեղեցիկ կաւալե՛ք էք:

Իսկ ևս, ճիշտն ասած, ընդհակառակն ցանկանում էի դեռ էլի յարդ ցանել նրա վրայ, որը ինքս էլ չգիտեմ թէ ինչո՞ւ այնքան լաւ սազում էր նրա դէմքին: Ու ծիծաղելով, հէնց օրիորդին էլ յայտնեցի իմ փափաքը: Նա ինքն էլ ծիծաղեց, գեսնից վեր առաւ մի բուռ յարդ ու ինձ տալով ասեց.

—Դէ՛հ, առ:

Ես հանդարտութեամբ առի յարդը և առանց տատանւելու ցանեցի նրա գլխին, կանակին, կրծքին:

Նա նոյնիսկ չփորձեց ձեռք բարձրացնել ու ընդմանալ. կանգնել էր զարմանքից խոշորացրած աչքերով:

Այ, ի՞նչ լաւ է հիմա . — բացականչեց նա :

Այդ միջոցին Սիմօն իր խոշոր դէմքով երեւաց դըրան չէմքին ու մտաւ մարազից ներս , ուշադրութիւն իսկ չդարձնելով օրիորդի վրայ թափթփած յարդին . նայւածքը սեեռած մարազի մի ինչ-որ անկիւնում , կոշտ-կոպիտ շեշտով մուտաց .

— Շուտով պէտքէ փախչիլ , հէնց այժմ իսկ : Ոստիկանները եկել ու արդէն խուզարկում են ընկերների սենբը : Շուտով այստեղ էլ կը հասնեն :

Օրիորդն ու ես շանթահարածի նման իրար նայեցինք .

— Ի՞նչ ես փնտռում — հարցրեց աղջիկը խուլ-ձայնով :

— Մի ինչ-որ օրիորդի են փնտռում : Երեւի որ և է մէկը նկատել է ձեզ այստեղ ու կասկածել . — պատասխանեց Սիմօնը : — Պէտք է շուտով փախչիլ :

— Բայց ո՞ւր փախչիլ — հանդարտ ձայնով ու ես ինքս էլ չգիտեմ թէ ինչու արտասանեցի :

Թող օրիորդը ևս գայ քեզ հետ միասին : Մինչև ոստիկանների այստեղ հասնելը դուք արդէն անտառին մտեցած կը լինէք :

Սիմօնի չրթունքները տժգունել էին ու բարակացել , աչքերն իրանց խորքից նայում էին սուր և ուժգին :

— Ի՞նչ արած , համոձայն ես — դիմեցի ես օրիորդին :

— Ինչպէս որ յարմար դատէք , — պատասխանեց նա վեր ցնցելով ուսերը :

— Սպասեցէ՛ք — փրնթփրնթաց Սիմօնը ու դուրս ելաւ մարազից , կողպելով դուռն իր վրայ :

Մենք մնացինք առանձին : Մարազում մի տեսակ դեղին-կիսադօտ լոյս , ոսկի ճառագայթ-զօտին անկիւնում : Օրիորդն իր վրայ թափթած յարդի չիւղերով ,

իր մեծ աչքերովն ու խոժոռ-անզգայ դէմքով թւում էր ինչ-որ երեակայական ֆէհա : Տխրութիւնը անհետացաւ , բայց մարազի անկիւններում այժմ կարծես թառել էր ինչ-որ մի չարագուշակ բան , մի նենգ չարութիւն ու դիտում էր , հետեւում մեզ :

Մի ինչ-որ կողմից լուեցին երկու ձայներ : Մենք իրար նայեցինք : Լարւած ունկնդրում ենք . . . :

Չայները լուեցին : Պիծակը դայրացկոտ բզզում էր մարազի ինչ-որ անկիւնում ու իր թեքերով բաղխւում յարդին : Մարազի տակ խողը խանչեց ծանր հառաչելով , հաւանականաբար պառկեց գետին :

— Օ՛Ֆ , միայն թէ ոստիկանների ձեռքը չընկնէինք — յանկարծ տեղից վեր ցատկեց օրիորդը ու արագ , անյողդողդ քայլերով սկսեց երթեւեկել մարազի մէջ : — Միայն թէ այդ չլինէր ! : Երանի թէ չլինէր ! . . . : Դուք ունի՞ք ատրճանակ — յարկարծ հարցրեց նա ինձ ու կանգնեց իմ առջև : Նրա մեծ , պայծառ աչքերը այլափոխուեցին , նրանց մէջ ցոլաց մի տեսակ չար , պողպատեայ ու մուայլ արտայայտութիւն : Նրա ներքեի , մանկական չրթունքը պինտ սեղմել էր վերին չրթունքին ու թւում էր թէ նա իր այդ չրթունքներով ասեղ էր բռնել : Նա ամբողջ իր մարմնով դռուկ էր մի տեսակ առաձգական , ուժգին : Հանեցի ատրճանակս ու սւի նրան :

— Իսկ դուք կարո՞ղ էք կրակել , — մուայլ ու անվրդով հարցրի ես :

— Ինքդինքս սպաննել կարո՞ղ եմ — պատասխանեց նա չարացած ու զգեստի տակ , կրծքին վրայ պահեց ատրճանակը :

Լուեց Սիմօնի ծանր քայլւածքը : Ներս մտաւ նա , ձեռին բռնած երկու հատ լայն-խոշոր վերնազգեստ ու

ապրով ինձ ասեց .

— Հազէ՛ք : Ու յետոյ ուղղակի դէպի անտառ : Սահմանադիժը հէնց նոյն անտառի մէջն է . . . իսկ ես ոստիկաններին այստեղ խօսքի կը բռնեմ, կը գրադեցնեմ : Երբ սահմանից այն կողմ, տեղը հասնիք, վերնազգեստները որեւէ միջոցով գրքերի հետ ուղարկեցէք . . . : Դէ՛հ, շտապեցէք ! :

Վերնազգեստների մէջ կար մի շալ, օրիորդի գլուխը փաթաթելու համար, իսկ ինձ համար գիւղացու գլխարկ : Մենք լուծեալքս եւ անապարանքով հազնւեցինք :

— Ուրքերը երևում են վերնազգեստի տակից . . . բայց ոչինչ մուտաց Սիւճնը . . . Դաշտի միջով պէտք է գրնաք . . . : Ի՛նչ լաւ կը լինէր եթէ ետեւից հնկատէին . . . : Ասեմք, այսօր կիւրակի է, դաշտում ոչ ոք չկայ . . . : Աստուած ձեզ հետ : Բարի ճանապարհ . . . : Շուտ !

Վերնազգեստների տակ պահելով մեր սեփական գլխարկները, դուրս ելանք մարազից : Փողոցը խաղաղ էր — ոչ ոք չկար : Մեր բակի խրճիթը իր փոքրիկ խեղձուկ լուսամուտաներով նայում էր մեզ օխտուր ու մըտածկոտ, ծիծեռնակները թռչում էին, երկինքը կապոյտ եւ յառակ, անդորր ու գւարթ էր :

Ջրածգօրէն լայն բացւած խոչոր աչքերով ու մեր չրթունքները պլնդ գոցած մենք փախչում էինք բանջարանոցների միջից, ոլոր-մոլոր ճանապարհներով ծանր, լայն-խողորկեկ վերնազգեստների մէջ փաթաթւած վազում էինք, երբեմն սայթաքում, մեր շուրջը դիտում, օգնում միմեանց ու դարձեալ փախչում հա՛ փախչում էինք : Տեղեր կային, որ սողալով անցանք, ապա ցատկեցինք ինչ-որ խորխորատի վրայից, վազելով-անցանք կանկի ցանւած մի արտի միջից, որ օտը հոտ էր արձա-

իւրւմ, ու կոխկոտելով տունկերը մենք լայն հետք թողնեք մեր ետեւ, ու շարունակելով վազել վերջապէս ելանք ճանապարհին վրայ : Ծանապարհից երևում էր անասուր, հեռու, կարծես ցանկապատի նման :

— Յիշում եմ կանդ տօնք : Խոր, հեիհե ու արագ չնչում էինք : Նայեցինք ետեւ : Ամայութիւն էր, մարդ չկար : Բանջարանոցների կողքին լուռ-մունջ կանգնել էին ուռիները, ու միայն կանեփի կամանջ, գիսաւոր տունկերն էին յաճօխ մեկամուղծիկ շարժում շնչում :

Օրիորդի երեսին վրայ փայլիւրում էին քրտնքի կաթիլները . . . շալի տակից դուրս ընկած մազերը վայրենի ու մանդաղաձև փունջերով պստեկ էին նրա դէմքը : Վերնազգեստը անչնորք ծանրութեամբ նրա ուսերից կախւած ճնշում էր նրանց դէպի վար :

— Շող է . . . — ասեց նա խուստ ձայնով ու ապա հարցրեց — Հեռու է արդեօք անասուր :

— Ահա՛ — ցոյց տւի ես պարզելով ձեռքս դէպի առաջ :

— Այլևս կարիք չկայ վազելու . . . — խօսեց նա ձեռքը կրծքին սեղմելով : Մենք սկսեցինք քայլել : Ես ամաչում էի ու ափոստում ինչ-որ բանի մասին :

Մեր վերնազգեստների փեշերը ճօճում էին տարուրի ու խառնում ոտերի արանքում : Ղլխարկս տաք կոնպրէսի նման խաշում էր իմ գլուխը, իսկ օրիորդի ցլօտեայ շխապէն շարունակ վար էր ընկնում նրա վերնազգեստի տակից : Ես նայեցինք, բայց ո՛չ ոք չէր երևում ճանապարհին վրայ :

— Հանգստանանք . . . — ասեց օրիորդը : Մենք նստեցինք մի հաճարի արտի տակ : Օրիորդը

V002  
6104



նայեց ինձ և տաանց ծիծաղելու, լուրջ շեշտով խօսեց,  
— Ընչպէս ծիծաղելի էք դուք այս վերնադպեասը  
հագած: Յետոյ, յոգնած շարժումով քաշեց-հանեց իմ  
զլխից գլխարկս և դրեց իր կողքին:

— Այսպէս լաւ է. — ասեց նա թեթեւ ժպտելով:  
Յիշում եմ, նրա այդ անվերապահ վարձունքից ես  
ինչ-որ մտերմութիւն չգտայի դէպի նա:

— Աստուած իմ! Դ՞նչք բոլորովին քրանկ-թրջւել  
էք: Սպասեցէք...:

Նա իր վերնադպեասի ասկից դուրս հանեց մի փոք-  
րիկ թաշկինակ ու սկսեց լուրջ, հոգատար խնամքով  
սրբել իմ ձախտը:

— Այ այսպէս...: Այժմ լաւ է:  
Չուզեցի խօսել: Ես նրան նայել միայն կարող էի:  
Չգիտեմ, նա նկատեց արդեօք թէ ես ինչ էի ցանկանում  
ասել նրան...: Չգիտեմ...:

Յետոյ դարձեալ շարունակեցինք մեր ճանապարհը:  
Այլևս չստ քիչ անգամ նայում էինք ետ, բայց աչա-  
լուրջ ու յամուտ նայուածքով դիտում էինք մեր առջևի  
կողմը, անտարբ. ու քանի սուտ էինք գնում, անտա-  
ռը ա՛յնքան թոււմ էր աւելի և աւելի մօտիկ:

— Սահմանադիւր անտառի մէջն է — հարցրեց նա:  
— Կարծում եմ: Այդպէս ասեց Սիմօնը:

Մեր առաջ, հեռուն, սևին էր տալիս մի սայլ: Յի-  
շում եմ, մենք կարծես միամտամտակ նայեցինք իրար  
ու զւարթօրէն ծիծաղեցինք:

— Իստարկ բան է — հարցախն շեշտով ու ծիծա-  
ղելով խօսեց օրիորդը:

— Հմ?... — անձարացած նայեցի ես:  
— Գիտէ՞ք ինչ: Եկէ՛ք այստեղ մի քիչ նստենք ու

ծածկինք մեր սաները: Գուցէ հանդասանա՞ք:  
— Ծիշա է!

Նստեցինք: Մեր սաները ծածկեցինք վերնադպեասի  
փէշերի տակ ու գարձեալ նայեցինք իրար:

— Չէ՛, — մենք այս դրութեան մէջ մաւրացկանի ենք  
նմանում — ասեց ու ծիծաղեց նա: — Այսպէս չի լինում:  
Ուրիշ կերպ նստենք: Այդպէս չէ...: Ծածկեցէք ձեր  
սաները ցորենի հատիկերի մէջ:

— Դա հո՞ճար է, ցորեն չէ — տարկեցի, ես ինքս  
էլ չգիտեմ թէ ինչու:

— Միեւնո՞յն է: Այ այդպէս...:

Իմ և նրա միջև մտերմութիւնը աւելի և աւելի շա-  
տանում էր: Թոււմ էր թէ մենք շատ վաղուց, կրկ և  
կցէ, որ և է անզ միասին ապրել ենք, յետոյ բաժանել,  
իսկ այժմ նորից հանդիպել-միացել իրարու:

Հեռուն երևացող սայլը մօտեցաւ մեզ: Ահա, ար-  
դէն հաւասարեց մեզ հեա մի գծի վրայ: Սայլին վրայ  
նստել էին երեք գիւղացիներ, մինչև ուսերը երկարած  
մազերով: Նրանց գլխարկները նմանում էին շաւ աւած  
կոնածև պտուկներին: Նրանցից երկուսը սայլին վրայ  
թեք նստած՝ վար էին կախիկ իրանց սաները. իսկ եր-  
րորդը նստել էր ուղիղ: Նրանք ակնապէջ մեզ դիտե-  
լով հեռացան:

— Անցան — ուրախ արամադրութեամբ ասեց օրի-  
որդը գլուխը շարժելով. — գնանք: Բայց հանէ՛ք ձեր  
գլխարկը: Միթէ՞ նա չստ գուր եկաւ ձեզ: Տէ՛ք ինձ:

Նա քաշեց առաւ իմ գլխից գլխարկս. դուրգու-  
րանքով ջերմ ժպտեց ու դրեց իր վերնադպեասի գըր-  
պանում:

— Երբ պէտք լինի՝ կը տամ...: Իսկ այսպէս ինչ

լաւ է: Ճիշտ է. չէ՞ — յանկարծ զւարթ ծիծաղեց նա: Ես ինքզինքս զիտեցի և իսկապէս համոզուեցի որ այսպէս առանց գլխարկի աւելի լաւ եղաւ, աւելո՞ւք հըրապուրիչ, ուժեղ:

—Ձեր անուան ինչ է — յանկարծ հարցրեցի ես նըրան:

Նա փաղաքշահօք ինձ նայեց:

—Ձեզ ինչ:

—Ինչպէս թէ - ձեզ ինչ...: Հետաքրքիր է գիտեսալ թէ ո՞ւր հետ ճանապարհ եմ գնում:

—Է՛հ, ա՛յ թէ ինչ...: Բայց եթէ ես ձեզ ասեմ թէ իմ անունը Գանեսա է կամ Մանեսա — այդպիսով գու՞ր միթէ՞ ինձ ճանաչած կը լինէք: Չե՛մ ասում:

—Ինչո՞ւ:

—Ձե՛մ ուզում: Այսպէ՛ս լաւ է: Ես ինքս էլ չեմ ցանկանում գիտենալ ձեր անունը: Ես միայն ճանաչում եմ ձեր աչքերը, յետոյ... գիտեմ թէ ինչպիսի մազեր ունիք... կարծեմ չէ՛կ - գոյն: Այսպէս... չէ՛կ մազեր, այլն: Իսկ անունը՝ գոհնիկ լսան է: Այդպէս չէ՞... — նա շնորհալի կերպով բարձրացրեց յօնքերն ու դա՛րձեալ ծիծաղեց:

Ես էլ ծիծաղեցի: Կատարելապէս վստահ եմ, որ ես նրան ճանաչում եմ. — մենք մի ինչ-որ տեղ ապրել ենք միասին: Ո՞վ գիտէ, գուցէ նա մի ժամանակ զւարթ ողորենի ծառ է եղել, իսկ ես քամի: Ու երբ իմ շոյանքի տակ նա հրճւանքով սօսափում էր տերեւները, էս երգում էի նրան քամիի երգը անդորր գիշերին...: Ո՞վ կարող է ասել թէ — ո՛չ: Գուցէ մենք մի դոյզ հասկեր էինք, ծլած - կանաչած կողք - կողքի...:

Ո՞վ գիտէ: Բայց ես նրան ճանաչում եմ վաղո՞ւց,

յա՛տ վաղուց:

Ու քա՛նի յոտաջանում էինք, անտարը հետզհետէ մեզ թւում էր աւելի մօտիկ: Նրա աղօտ «ցանկապատը» բութ արատալայտութեամբ ու լուռ նայում էր մեզ. ու նրա նայածքում կար ինչ - որ չար - թշնամութիւն, ցուրտ ու թաղուն նենգութիւն:

—Անտար... — կամացուկ չչնչաց աղջիկը, նայելով ինձ լուրջ ու կարծես մի քիչ զարմացած աչքերով:

—Այտուհետե պէտք է զգուշութեամբ գնալ... — պրտասխտանցի:

—Բայց դիտէ՞ք, ես չեմ հասկանում թէ ինչո՞ւ համար ինձ սարսափելի չի թւում մեր վիճակը...: Միայն թէ շատ հետաքրքիր է... — ասեց ու զարմանքով ժրպտեց նա:

Ես նրան նայեցի: Ու նա այդ միջոցին ինձ թւաց չափազանց գեղեցիկ: Յիշում եմ. իմ կրծքի տակ ու՝ ունի - բարձրացաւ ալիքի պէս մի բան, յուզմունքի մեծ ու ջերմ մի ալիք, և գիտէ՞ք, յուզմունքի սյնալիսի մի ալիք, որ համակում է ձեր ամբողջ էութիւնը, երբ ճանձրոյթից-յոգնած, անսպասելի կերպով մտնում էք սաճար, ուր անո՛ւշ յուզումնալից ձայների ու նւագի համակ ներդաշնակութեան ու զգացումների ազդեցութեան տակ դուք զգում էք, թէ ինչպէ՛ս ձեզ պատեց անսահման տխրութիւնը, ջերմ ու դուրսիլի...:

—Գիտէ՞ք, դուք չափազանց սիրուն էք այժմ — ասեցի ես. բայց խօսքերը ակամայ ու անզգուշաբար դուրս թռան իմ բերանից:

Նա մի քիչ կարմրեց, աչքերը խանդաղատանքով ինձ նայեցին ու ժպտալով պատասխանեց:

—Չդիտեմ թէ ինչ պէտք է ստեղծուի աշխարհի խօսքերի հանդէպ...:

Երկուստ էլ լուսն՝ բայց ուրախ արամազրութեամբ և արագ ընթացքով քայլում էինք դէպի անտառ:

Յիշում եմ. զրոնից յետոյ մենք այլևս չխօսակցեցինք: Երբեմն միայն նայում էինք դէպի ետ. կարճ ժամեր փոխանակում ու երբ մեր աչքերը վայրկե՛ս արժ միմեանց էին հանդիպում, խկո՛յն վար էին խոնարհւում: Մենք լուսն քայլում էինք դէպի յատու՛յ: Անտառը, որպէս պարիսպ, հեռո՛հեռ հրեւում էր աւելի բարձր ու դառնում աւելի սրոյ, տեսանելի:

Մենք չէինք խմանում թէ ուր է խակահան սահմանադիրը, գուցէ հէնց աշխարհի ցանկապատի նման երեւացողն էր, գուցէ դեռ աւելի հեռու, գուցէ մի սահմանապահ զինւոր, որն է տեղ թողնւած, իր դուրս աչքերով հետեւում է մեզ, իսկ ձեռքով շօշափում հրացանի բլթակը՝ վստահանալու համար թէ արդեօք յաջող կրահւում է: Լարում արամազրութեամբ մեր աչքերն ուղղել էինք դէպի յատու՛յ ու սուր նայածքով թափանցում ձառերի արանքներում ու ինչ որ բան փնտռում...:

Իսկ «ցանկապատ»ը չար, նենգ ու ցուրտ անողորմութեամբ ծածկում էր մեր անողորմութիւնից այն՝ որին մենք փնտռում էինք, իսկ նա՛ մեզ սպասում:

—Ո՛չ ոք չի երևում...— չնչաց օրիորդը:

—Չի երևում...— փափացի ես իմ հերթին:

Ու շատ անգամներ ես ցանկացայ բռնել նրա ձեռքը, զրկիկ նրան, ձուլել նրա հետ ու այդպէս գնա՛լ դէպի յատու՛յ: Ստաթիկ ցանկանում էի...: Բայց...:

Եւ ահա «ցանկապատը» այլևս բոլորովին մեր առջև է, մօտիկ: Պէտք է շեղւել հանապարհից, ձեղքել-

անցնել մի փոքրիկ արտ և ահա մենք կը մտնենք անտառ:

Դիտեցինք մեր շուրջը: Ըննապարհը տալի էր ու թւում թէ հեռու՛ն, նա մտիկին գետի նման թափւում է կանաչ հատիկերի ծախում: Չորս կողմը լուսն ու տնդորր: Բայց ո՛չ այնպիսի անդորրութիւն որ լինում է քաղաքներում գիշեր ժամանակ, ուր մուռալի նըման քնում են և՛ քարերը և՛ տանջանքը ու գիշերը մեղմօրէն հնչում է սկանձիզ որպէս յախտնականութեան չղջիկ...:

Մինչդեռ անդորր ու խաղաղ կարծւած դաշտում, կատարում է վտեմ, առողջ ու յախտնական բեղմնաւորութեան ընթացքը, ուր մեզմ քամին զգւում է ծաղիկներին ու խաղեր սարքում նրանց, թռչունը թեղով կապածի նման դողդողում է օդի բարձրութեան մէջ միեւնոյն տեղում ու յանկարծ կապանքներից ազատածի պէս բարձրից վար է խոչանում դալար արտի մէջ, իսկ դալար արտում տեղի է աւնենում ինչ որ իրարանցում, ինչ որ պայքար միջատների, ձկների, միսիկների ու հատիկերի միջև:

—Գնա՛նք...— չնչաց օրիորդը:

—Գնա՛նք...— չնչացի ես:

Բւ դա՛րձեալ ես ցանկացայ բռնել նրա ձեռքը... Բայց...:

Մասնք արտի մէջ: Հատիկը խելւում էին ու ծրրիթները մեր ոտների շուրջ թռչկոտում:

Անտառը ցցւում էր մեր առջև անշարժ ու սպասողական:

—Լսեցիք— յանկարծ խօսեց օրիորդը ու կանգ առաւ — եթէ ինձ սպանեն ու դուք յոյժ մնաք, մի նա-

մակ գրեցէք այս հասցէին . . . :

Նա տրաստանեց հասցէն ու մի քանի անգամ կրկնեց իրարու վրայ :

— Գրեցէ՛ք այսպէս. «Մուսեան սպանեց սահմանադիրի վրայ : Նա միտաւ այնպէս՝ ինչպէս մեռնում են բոլոր նրանք, որոնք սաստիկ սիրում են կեանքը . . . » : Ուրիշ ոչինչ . . . : Կտ՞ւմ էք . . . : Խոստանո՞ւմ էք կատարել խնդիրքս :

— Այո՛, կը կատարեմ . . . — անվրդով պատասխանեցի ես :

Ու . . . բուն ցանկութեամբ ես ուզում էի բռնել նրա ձեռքերը, գոնէ մի ձեռքը միայն :

— Դէ՛հ, այժմ գնանք — վճռական շեշտով շնչաց նա :

Մեր նայածքներն իրար հանդիպեցին : Նրա նայածքը կարծես համբոյրով մխրճւում էր իմ աչքերի մէջ :

Ու մենք քայլում էինք դէպի յառաջ հանդարտ, յամբարձակ ու իւրաքանչիւր վայրկինին կանգ առնում ու մեր նայածքը խորասուզում անչարժ ծառերի շարքերում . . . :

— Լա՛ւ լսեցէք, պէտք է գրել. «Մեռաւ այնպէս՝ ինչպէս մեռնում են բոլոր նրանք՝ որոնք սաստիկ սիրում են կեանքը» — յանկարծ կրկնեց նա :

Ես լռութեամբ շարժեցի գլուխս :

Անցանք արար : Մտանք անտառ :

Հինաւուրց հաստ կաղնիները լայն, լայն բաց արած իրանց բազուկ-ձիւղերով կարծես մեզ հիւրընկալում էին իրանց կենսաբախ գրկում : Վայելջակազմ սպորների ծառերը, ձերմակ բուններով, կարծես մինչև մէջքը մերկութիւնից ամօթ զրիսած կանգնեց էին կաղնիների ա-

բանքում ու պահւում նրանց ետև : Բազմազան թռչնիկներ աշխոյժ ու զարմացած ուտոտուում էին ճիւղից ճիւղ ու ճառողում :

— Նստե՛ք . . . : Պէտք է մտածել թէ ո՛ւր գնանք . . . — փոփսացի ես :

Մտցառների մէջ տեղ ընարեցինք : Այնտեղից տեսնւում էր անտառի խորքը, իսկ մենք մնում էինք անընկառիկ : Նստեցինք :

Ու սկսեցինք դիտել Մտներ, ծառեր, ծառեր, արևի շողերը, թփեր, սոււերներ . . . :

— Ես ոչինչ չեմ նկատում . . . — շնչաց Մուսեան :

— Մ'ա էլ :

— Հաւանակամարար սահմանը դեռ հեռու է . . . :

— Գուցէ՛ :

— Նստե՛ք դեռ մի քիչ էլ . . . : Այստեղ լա՛ւ է . . . :

Շտապելու կարիք չկայ . . . :

Ու նա հանդարտ, հեղ տիրութեամբ ժպտեցաւ ինձ :

Մենք լսեցինք : Անտառը ես թւում էր թէ խազաղեց մեզ հետ միասին ու այլևս չէր նայում առաջ-տեղ-նման թշնամական ու խոժոռ : Կաղնիները իրենց բարձրութիւնից դիտում էին մեզ կարեկցաբար : Նրանց հոտից մերկիրան սպորների ծառերը, ամօթխած ու տեղամարձակ, աչք էին քթթում մեզ ու իրանց ձերմակ ճիւղերով անուշ-անուշ ժպտում :

Անտառը լսեց մեզ հետ միասին, բայց նա շարունակում էր ապրիլ իր սեփական կեանքով : Միրոյ, ճնունդի ու բարգաւաճման կեանքով : Թփերի, սոճոյն ծաղիկների վրայ աշխոյժ բզկում էին մեղունները, բարձրից, ինչ-որ կողմից փայտիորդ ձայնեց, երկու թռչ-

նիկներ ճիւղից ճիւղ ոստոտեցով նայում էին մեզ ու անսպասելի կերպով իրար հետ գիրկնդիսառնում—մի-  
անում: Թիթեռնիկները երբեմն թռչկոտում էին սիրով  
կապակցւած, ու երբեմն երջանիկ ու ժառպառութեամբ  
հանգչում մի ունէ տերեւի վրայ ու շարժում իրանց շո-  
չափուկները: Խոտերի արանքում զոյգ զոյգ վխտում  
—գիւում էին միջատները:

Կատարում էր կեանքի վսեմ, գեղեցկագոյն գոր-  
ծողութիւնը:

Ես սիրում եմ այդ գործողութիւնը անտառում,  
գաշտում: Նա մաքուր է ու չի այրանդակւած սիրոյ  
բարոյականութեամբ, չի ապականւած տուփանքի կեղ-  
կեղծաւորութեամբ: Նա հզօր է, բացարձակ ու պարզ:  
Ես սիրում եմ այդ միջատներին, թռչնիկներին, այդ  
փոքրիկ անգիտակից բողբոջներին, ընդդէմ իրանց մեծ  
եղբայր—մարդ արարածի կեղծաւորութեան:

Իմ բովանդակ էութեամբ ես յափշտակւած էի  
մայր—բնութեան բեղմնաւորման կեանքի ամբողջ ըն-  
թացքով, և կամ ինչպէս պիտի ասէր մեծ եղբայր—մարդ  
արարածը «ամբողջ անամօթութեամբ»:

Նրանք, այդ միջատները, թիթեռնիկները, բոլորն էլ  
կարծես ստում են մարդուն:

—«Ահա նայիր, մենք կարիք չունինք ծածկելու,  
մեղանում չկան «պօրինի ծնածներ», մեղանում չկայ  
անցագիր, չկան բարոյականութիւն ու «պատժական օ-  
րէնքներ», մենք—փոքրիկ, առողջ էակներ ենք ու մա-  
քուր անամօթներ...»:

Ես ու Մուսեան նայում էինք նրանց, իսկ նրանք  
թռչկոտում էին, ոստատում, ըզզում ու ճուռում մեր  
չուրջը: Այդ անամօթները, զոյգ—զոյգ, շաղկապւած

սիրով, թռչում—բարձրանում էին օգին մէջ ու յաճախ  
նստում մեր ծնկերի, մեր դիտի վրայ: Ծաղիկները նայում  
էին մեզ ու սիրոյ և ծաղկումի բոյրով անուշ ու քնքոյշ  
բուրում: Ողբերնի ծառերը շնչում էին իրար հետ, մերկ  
ու ճերմակ բուռով այդ ողորկները:

—Ինչ շոգ է...—միմիջեց Մուսեան նայելով ինձ  
երկար ու շողջողուն նայւածքով: Իսկ ես լուռ նայեցի  
իմ ընկերուհուն ու ինչ որ բան տարօրինակ թւաց ինձ:

Մենք երկու մարդիկներս, հալածւած ու իշ մարդ-  
կանցից, նստել ենք այստեղ ու պէտք է այժմ իսկ գը-  
նանք, ո՛վ գիտէ, գուցէ հանդիպելու ուրիշ մարդկանց  
որոնք այս անտառի մէջ—ուր սիրոյ ու կեանքի մեծ ըն-  
թացքն է կատարում— ունէ տեղ թաքնւած, մեղ են  
սպասում մահւան գործիքն իրանց ձեռքում:

Մարդկանցից հալածւած մենք երկուքս, մտերիմ  
զգւանքով ու ջերմութեամբ լիցուն աչքերով, այդ գըգ-  
ւանքն ու ջերմութիւնը իրար խստանկու ցանկութեամբ,  
այդ գգւանքով ու սիրոյ կրակով—կեանքի այդ վեհ և  
հսկայ պարգևով—արբենալու ըզճանքը մեր կրծքում,  
մենք երկուքս... երկու մարդիկներ և ոչ թէ միջատներ,  
նստել ենք ու շնք համարձակում այդ անել, որովհե-  
տե... որովհետեւ մենք հազիւ մի քանի ժամ է որ  
միմեանց «ամամօթացի ենք»:

Մենք գուցէ այժմ սպանւենք, իսկ դրանից վերջ  
չէ՛ որ այլևս չեն մնում ո՛չ օրէնքներ, ո՛չ բարոյական  
չեն մնում ո՛չ միջատներ, ո՛չ գգւանք, ո՛չ սիրոյ ջերմու-  
թիւն. բայց, մենք... չենք համարձակում:

—Ինչո՞ւ դուք այդպէս սեւեռուն ուշադրութեամբ  
նայում էք ինձ— հարցրից Մուսեան և մեզմ ու անուշ  
գուրգուրանքով ծածկեց իր աչքերը ձեռքով:

Նոյն պահունն ես յտիշտակեցի նրա ձեռքը, սեղմեցի չրթունքներին ու թալիացայ: Մուսեսն նայում էր ինձ մի տեսակ ջերմ նայածքով, տարակուսանքով ու տրամուլթեամբ:

—Իմ սպանելուց վերջ, դուք պիտի յիշէ՞ք ինձ— չնչայալով հարցրեց նա:

—Ձեզ սպանել չին կարող

—Իսկ ես ձեզ պիտի...

Ես աւելի մտեցայ նրան ու երես սեղմեցի նրա ուսին: Կոչու վերնազգեստը ճանկուում էր իմ դէմքը, բայց դա ինձ թուում էր թաւիչ:

Մուսեսայի կուրծքը սկսեց ուռչել, վեր-բարձրանալ ու նրա չնչառութիւնը դարձաւ բնդհաս և ուժեղ:

—Մի՛ արա...—փսփսաց նա:

—Անհաճո՞յ է ձեզ—խուլ ձայնով հարցրի:

—Ոչ... Բայց...:

—Էլ ինչո՞ւ համար ասում ես «մի արա»:

Նա երեսն ինձ դարձրեց, ժպտեց ու ձախ ձեռքով սիրալիր-մեղմ քնքշութեամբ շոյեց իր դէմքը:

Ողորենի ծառերը դիտում էին մեզ հսկայ կաղնիների ետեւից ու անձայն, զւարթօրէն քրքշուում կաղնիների զգւանքով ու լուրջ ժպտում էին իրանց գիսաւոր ճիւղերով, թիթեռնիկներն ու միջատները թռչկոտում օտոտալով, սողում...: Իսկ մեզանից քիչ հեռու, ով գիտէ թէ որտեղ, ո՞ր խոնաւ փոսին մէջ, անտառի խորհրդաւոր կիսախաւարում մեզ սպասում էր մահը...: Թող սպասի: Թող սպասի այդ սև, լպրծուն սողունը, նողկալի մահը:

—Մուսես!...—ասեցի ու փայլաշայանքով սեղմեցի ընան մարմինս:

Նա նայեց իմ տչքերի մէջ, աննշանքից պապականաց չրթունքներին մէջ:

—Ոչ, Պէտք չէ...:

—Մուսես!...:

—Գնա՛նք այլեւ...: Արդէն ժամանակն է...— ու նա մեղմօրէն հեռացրեց իմ գլուխը իր կրծքից:

—Դրէ՛ք ձեր գլխարկը, ու գնանք...: Ժամանակն է...:

Անտառը մռայլեց: Թռչնիկները փախան վախովիւ, նրանք թռան անտառի խորքերում: Խաւար ու սև փոսը մեզ էր սպասում...:

Առի գլխարկս, ստքի ելանք ու առանց նայելու մէկս միւսին, հանդարտ քայլածքով առաջ ընթացանք: Իմ ձախ այտը այրւում էր ջերմից, իմ ափերի մէջ դեռ զգում էի նրա ձեռների ջերմութիւնը, իսկ կրծքիս տակ ներս էր սողոսկում խորհրդաւոր ու խոնաւ մահաւան փոսից ինչ-որ անձոռնի ու ցուրտ ածխահոտ:

Մեր ատամները իրար սեղմած, յօնքերս վեր կիտած զգուշութեամբ քայլում էինք դէպի յառաջ. չոր ոստերի վրայ կոխելիս կրծկըրտոցով շարժւում էին նրանք, իսկ մենք կանգ առնում, չորս կողմ դիտում ու ականջ դրնում, լսում:

—Բայց ո՞ւր է իսկական սահմանագիծը—հարցրեց Մուսեսն:

Ես ինքս էլ չգիտէի վեր ցնցեցի ուսերս ու շարունակեցի քայլել:

Ու քանի յառաջ գնում էինք ես այնքան համոզւում էի որ մենք պիտի սպանւենք: Առանց ճանաչելու գիտենալու կը գնանք և յանկարծ կը հանդիպենք սահմանապահ գիւնդներին, յետոյ կը փախչենք և անա...:

վերջացաւ: Բայց յիշում եմ որ իմ ամբողջ էութեան մէջ չկար ո՛չ վախ, ո՛չ տխրութիւն, ո՛չ ախտասնճ, ոչ ի՛նչ, ոչ ի՛նչ, բայց յուսահատօրէն յարեամ արամադրութիւնից, ճակատագրական անխուսափելի ինչ - որ բանի անհուն մերձեցման նախազգացումից, ինչ-որ հակայական բողոքով մի զարկերակի բաղխումից ու իմ ամբողջ էութեանս մէջ մղւող պայքարից ընդդէմ այդ ճակատագրական, անխուսափելի լանին:

Երբեմն մենք նստում էինք, ընկողմանում, ու ես ականջս գետնին դրած ուշադիր ունկնդրում էի, յուսալով որ և է ձայն լսել. երբեմն այն տեղերում ուր ծառերի շարքը նօսքանում էր, մեր ձեռքերը գետնին դրած ու ու չորս սոսների վրայ սողում էինք, իսկ երբեմն երկու ստեղծների նման շարժւում ծառից - ծառ, փախչում ու կրկին թագնւում: Ու դարձել էր պատում մեզ միշտ դէպի յառաջ լայն բացւած աչքերով նայելուց ու անտառի ամենաչնչին ձայն ու ծպտունը ու իւրաքայլեր շարժումը որսալու յոգնածութիւնից:

Իսկ անտառը լուում էր ու խորքի մէջ ծածկում իր դաղտնիքը: Այլևս չկային ճերմակարուն ողորնիները, չկային թիթեռնիկները: Հոգը խոնաւ էր, սե, փոսած տերեւներով ծածկւած ու անչափ առատութեամբ գետին թափւած փոքրիկ ճիւղերը կըրճկըրտալով շարդւում էին մեր ոտների տակ: Կիտախաւարը նայում էր մեզ թշնամական, սպառնալից ու անողոք:

—Տւէ՛ք ձեր ձեռքն ինձ...:—փափառայ Մուսեան: Նայեցի նրան: Նա սոճոյն էր: Աչքերն այրւում էին սողորումից, նրա մե՛ծ, գեղեցիկ աչքերը:

«...Այնպէս՝ ինչպէս մեռնում են բոլոր նրանք որոնք սատարի սիրում են կեանքը.» — յանկարծ յիշեցի

ես: Սեղմեցի նրա ձեռքը, նա էլ սեղմեց իմ ձեռքը ու հէնց նոյն պահուն, մուսայանք ինքզինքնիս ու դա՛րձեալ խորասուզւեցինք ինչ - որ անյայտ բանի մօտալուս լինելու նախազգացման ու սպասողականութեան մէջ ու գրեթէ գիտակցութիւնից անկախ մեր էութեան ներսում բռնկւած հսկայ բողոքին մէջ:

—Սը՛սս...—կանգ առինք:

Ինչ - որ յուսածովի նման բան էր երևում, ծառերը նօսք...: «Այնտեղ!»—լուս մենք նայեցինք իրարու...: Մի քանի քայլ ևս յառաջ գնացինք ու գրեթէ անհնչոցա՛ծ ընկանք գետին...: Հեռո՛ւ տեղից լուում էր փայտփար թռչունի ծլուրցը...: Լսւում էր ծառերի փայտը կրծող որդերի կրճրասցը...: Ծառից պոկեց մի չոր տերեւ, տարուրեր օրօրեաց օդում ու վար ընկաւ...:

—Սըսս!...

Քանի քայլ ևս դէպի յառաջ...: «Լուսածագը» աւելի բացւեց...: Երկինքը երեւում էր կապոյտ...: Մեր ձեռները դողդողում էին ու մեր կուրծքի տակ բարձրանում յուզմունքի ցուրտ ալիքներ: Մեր սրտերը սրտփում էին ուժգին:

Ես լուս նշան արեցի. բաց թողեցի նրա ձեռքը ու մենք սկսեցինք գետնի երեսով սողալ դէպի յառաջ, ծովների վրայ, անձայն ու անչուկ. ձեռքով խարխափում և փնտռում էինք ծունկ դնելու այնպիսի տեղ, որ ծածկւած չլինի ոտներով ու տերեւներով: Ես դարձայ ու նայեցի Մուսեային. մաղերը ցիրուցան, աչքերը մեծ ու չոչոզուն, չրթունքները պինտ սեղմած. մէջքը կորացրած - նա իր այդ դիրքով ինձ թւում էր մի տեսակ չափազանց սքանչելի ու գեղեցիկ գազան, —հը-

զոր ու վայրենի գազանն:

«Լուսածագը» լաշնացու - ծաւալեց: Երկինքը կապուտակ...: Հետո՛ւ, Հետո՛ւ...:

Լաւեց ինչ - որ շշուկ ու անհետացաւ: Քարացանք մենք:—Երկար ժամանակ պառկել էինք հողի երեսին ու լսում, ունկնդրում...: Փայտիօրը ծլւլաց...: Մի թռչնիկ ձոււղեց ու նստաւ ծառի ճիւղին, փետուրի նրման նա շարժւում կը դէս ու դէն, երեքացնում պոչն ու ոտոտաւում վեր - վեր...: Մեր սիրաը արօրում էր խելագար և ուժգին թափով:

Դարձեալ սողոսկելով սկսեցինք յառաջ գնալ...: Ցանցառ ծառերի արանքից, մեղսնից հպիւ երեք քայլ հեռի երեւաց մի ձորակ: Ես ձեռքովս նշան արեցի Մուսեային որ կանգնի, բարձրացայ սաքի ու նայեցի: Հաւանականարար սա է խկական սահմանագլուխը— մտածեցի ես: Աւելի ևս յառաջ շարժեցի լու նայեցի չորս կողմս: Այո, երկու սիւներ—մէկը միւսն հանդէպ, մին մերն էր (ուռսականը)—խոշոր ու անշնորք, —իսկ նրա դիմաց, միւսը՝ փոքրիկ երկուսի վրայ էլ տնկած էր արծիւ գինանշանը ու երկուսն էլ խայտարեցաւ: Երկուսի շուրջն էլ խորհրդաւոր ամայութիւն...: Բայց արդե՞օք ամայութիւն էր: Գուցէ մտաւայրում, որ և է տեղ, դարան մտած սահմանապահ գինուորը աչքով հետեւում է մեզ, իսկ ամայութիւնը լոկ սպասում ընդհատելու համար մահւան բարրարտու ու անել ոտնոցով: Նայեցի Մուսեային: Նա էլ վերկացել ու ջղադրգիւ նայում էր դէպի յառաջ ու չըջակոյքը:

«Անտեղ!»— գլխովս նշան արեցի ես: Յետոյ հակեցի դէպի նա, ուժգին բռնեցի նրա ձեռքը և շնչացի: —Ուղղակի յառաջ: Եթէ պրտան կամ կրակնե

գարձեալ չպիտի կանգնել: Միւսնայն է...: Դէ՛հ!...:

Ես բաց թողի նրա ձեռքը, կորացայ ու սողացի յառաջ: Ոտներիս տակ ջարդւած ցախերը կըրճկըրտում էին, բայց ինձ թւում էր թէ ամբողջ անտառն է աղմկում, ծառերի բունները պսպղում էին, լոյսը փայլփլում, աչքերիս երեւաց ինչ-որ երկար, հարթ տեսարան կարծես թէ անտառում ծառերը կտրել ու ճամբայ էին բաց արել, ու միեւնոյն պահուն կարծես թէ մէկը բըղաւեց, իմ առջևից սուրաց-անցաւ Մուսեայի կիսադէմքը—աժդոյն ու ջղայնոտ, մի կողմում ինչ-որ բան կարծես ուժգին որոտաց, բղաւեց, դարձեալ որոտաց, յանկարծ մեր ոտների տակ յայտնւեց ինչ-որ խրամատ, նրա վրայից էլ ցատկեցինք-անցանք, աչքիս շողաց Մուսեայի ոտքը, ինչ-որ թփեր, մացառների, ու ականջումս զգացի քամու պոցը: Կրծքիս տակ ինչ-որ վեհ, հպարտ ու հզոր բան զգացի—երկնքի թևիթևութեան պէս ու լեռնային օդի ու վտակի ուժեղ հոսանքին նրման: Թռչում-անցնում էինք, շողշողուն ու տենդոտ աչքերով դիտում մեր շուրջը:

Անտառից արդէն դուրս էինք եկել ու այժմ քանի մենք յառաջանում էինք, մտայն անտառն ա՛յնքան մընում էր յետ, ու դառնում կորագլուխ: Նրա նման յետ էր մնում նաև մեր երազը, կօշմարը, մահւան խորհրդաւոր շունջը:

Մուսեան կանգ առաւ: Նրա աչքերը վառւում էին ու դէմքը դողդողում յաղթանակի վսեմ ու խելաշեղ երջանկութիւնից, կեանքի յաղթանակի բերկրութիւնից:

—Անցանք!—գոչեց նա յետ նայելիս ու այդ բառը հպարտ, վայրենի շեշտով դուրս թաւաւ նրա բերու-

Դ  
Ն  
Թ  
Է  
Թ  
  
սո  
րոն

նից :

—Անցանք!—կրկնեց նա խոր շունջ քաշելով : Նրա կուրծքը ուռչում, վիր էր բարձրանում ու սև մազերի մանգաղաձև գանգուր փունջերը դուրս ընկած ցան ու ցրիւ ծածանւում էին : Նրա չրթունքները այժմ այլևս հպարտօրէն բացւած, ջերմ աշխոյժով երջանկութիւն էին չնչում :

—Անցանք!—կրկին դռնեց նա ու յանկարծ վեր բարձրացրեց ձեռքերն ու գրկելով վիզս, խելայիզ ու բուռն տենչանքով սեղմեց մարմնիս :

—Անցանք!— ազազակեց իմ ամբողջ հոգին ու իմ ամբողջ էութիւնը : Ես փարւեցի նրան :

Դա երկու խոշոր միջատների յաղթութեան տօնն էր, դա կեանքի մրրիկն էր որ աւրում-սրբում էր «մի՛ արա», «չի կարելի» ընդունումները. դա արիւնի, ուղեղի, ջղերի, սակրների երջանկութիւնն էր, դա բեզմաւորութեան գերագոյն հաճոյքն էր, ոչ թէ կուրօրէն, այլ հողւոյ բաց ազան աչքերով :

Յանկարծ նա պոկ եկաւ ու մաւղւած աչքերով ըսկեց ինձ նայել. ծարաւած չրթունքներով դարձեալ փարւեց կրծքիս ու դարձեալ պոկ եկաւ :

—Նոտնք—նրմնջեց նա և ուժասպառ փուռեց գետին :

Նոտեցինք : Մեր չնջաւորութիւնն անհանգիստ ու մենք ուժասպառ : Երջանիկ ժպտում էինք իրարու ու զիտում մեր հոտն մնացող անտառը : Հեռուից թւում էր թէ այնտեղ ամէն ինչ անդորր ու խաղաղ է :

Երկար ատեն նստել էինք այդպէս Ու կար մի բան որի մասին չէինք խօսում :

Մեր չնջաւորութիւնը հանդարտեց : Ու աննկատելի

և աստիճանաբար սկսեցինք մի ինչ-որ բունի վրայ ափսոսալ, ու ինչ-որ անյայտ սրտաճառով ցանկանում էինք հեծկտալ : Մուսեան անշարժ, մատտանջ նայում էր հեռուն, հեռաւոր մի կէտի :

—Գիտէ՞ք ինչ—հանդիտ ձայնով խօսեց նա յանկարծ ջղային վճռականութեամբ ու ամբողջ մարմնով ցնցեց : Ես սպասողական արամադրութեամբ նայեցի նրան : Իսկ նա լարւած, սիրազեղ, երկար նայւածքով դիտեց ինձ ու խուլ ձայնով մրմնջեց :

—Այժմ մենք բաժանւում ենք իրարմից : Լս՞ւմ էք : Ես պիտի գնամ մի կողմ, իսկ դուք այլ կողմ : Ու դուք կրբէք պէտք չէ որ վնասէք ինձ : Լս՞ւմ էք : Ինչ է ձեր անունը :

Ես ասեցի անունս ու զարմացած նայեցի նրան :

—Երբեք! . . . որանից աւելին մենք չենք կարող ապա իրարու : Ոչ դուն ինձ, և ոչ էլ ես ձեզ :—Մեր . . . մեր սէրը պէտք է մուսի-չքանայ հէնց այժմ, սրպէտղի —ինչպէս ասել է ինչ-որ մէկը—նա այլևս երբէք չըմենի : Լաւ հասկանում էք իմ միտքը : Մի անտակ թրթեանիկների կան, որոնք մեռնում են սիրոյ վայելքի պահուն : Հասկան՞ում էք իմ միտքը :

Ես հասկացայ բայց լռեցի : Իսկ նա կարծես նայելով իր հողւոյ խորքում, ընդհատ ու յուզումնալից, զրգոււած շարունակեց .

—Երջանկութիւնը մօմնատ է : Գրանից վերջ—հիտաթափում, դուհկութիւն, ես արդէն գիտեմ այդ : Ամենագերագոյն երջանկութիւնն իսկ բաղդատելով իր հեանանքի հետ պիտի դառնայ ոչնչութիւն, ուրեմն նշանակում է նա կրբէք գոյութիւն էլ չունի : Ինձ այդպէս է թւում, այդպէս էլ զգում եմ այժմ հէնց

այստեղում...—նա ցոյց աւելց տիրար:

Ու շեղակի ժպտելով ինձ նայեց, իր վերաւոր եղնիկի խոչոր ու պազտաագին աչքերով:

Ես հասկցայ նրա միտքը, ես հասկացայ նրա խօսքերն իմ անյայտ ու տարտամ թախմութեամբ, այն մեծ վըշտով. որ չգիտեմ ինչո՞ւ ծնւեց իմ կրծքի տակ ու հասկացայ նրան իմ հոգւոյն վրայ ծանրացած այդ մի օրւայ տմբողջ կեանքով:

Բանականութիւնս ընդվզում էր. և իմ հոգւոյ խօրքից բողբջում: Բայց ես լսեցի:

Արեւը այրում էր, թիկերը շնչում:

Ապա նա բարձրացաւ, ծնրադրեց ու գրկելով իմ վար հակած գլուխը, ծածկեց ջերմ, խանդոտ ու երկար համբոյրներով:

—Այսպէս լա՛ւ է: Մնա՛ք բարո՛ւ...—տխրագին շնչաց նա սոքի երեսիս.—Ես ձեզ հոգւոյս մէջ պիտի կըրեմ...:—

Ես յախտակեցի նրա զգեստի քղանցքը, համբուրեցի ու բաց թողի:

Թաժանուհեց նա ինձանից. հանգարա հեռացաւ-զնաց Իսկ ես տեղումս նստած. խոր կակիծով ու ցաւով հեծկտացի իմ որբացած երջանկութեան վրայ: Գլխիս վերս աւելի ևս կնոպուտակում էր երկինքը, արեւը այրում էր իմ վար հակած ու բաց գլուխը, իսկ հոգւոյս մէջ մեծանում ու անցեալի թախիծով, սիրուն-զեղեցիկ ու մաքուր ծաղիկներով պլլում-փաթաթում էր այդ աղջկայ պտակերը:

Ո՞վ էր նա: Ո՞ւր է այժմ: Դեռ մինչև այսօր էլ ես չգիտեմ, բայց նրա յիշատակը կրում եմ հոգւոյս մէջ յաւիտեան!... յաւիտեան!...:



### ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
10	12	մեռել-դիակ դատել	մեռել-դիակ եմ դատել
11	11	ցնոտեայ	ծղ օտեայ
11	15	յայտնի	յարդի
11	24-25	կարծես թէ ինձ համար տեղ բաց անելու համարս	կարծես թէ ինձ տեղ բաց անելու համարս
11	30	չուղիքը	չիւղիքը
12	3	քմահաճոյքոտ	քմահաճ
12	20	տեսնում էր	տեսնում էր
12	20	ինչքէս	ինչպէս
13	30	խոչորացրած	խոչորացած
14	11	ինչ ևս	ինչ ևն
15	16	յարկարծ	յանկարծ
16	28	որ	ուր



ՀԵՏՁԷՏԷ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ

- |                        |                  |
|------------------------|------------------|
| Ազատ Սև և Ամուսնո թիւն | — Վ. Գաւալովիչ   |
| Զինա                   | — Վ. Իննիչենկո   |
| Ղազարոս                | — Լ. Օնիկ Անտրիև |
| Քիլիսիսի Երգերը        | — Պիւռ Լուրդի    |
| Կօօպերացիա             | — Մրնին և Բրազին |
| Օմի Պատմութիւնը        | — Լ. Օնիկ Անտրիև |

ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿԻՑ. ԶԻՐԻԿՕՎԻՑ ՎԵՐՊԻՑԿԱԵՄԻՑԻՑ  
ԱՐՑԻՊԱՆԵՐԻՑ ԵՒԼՆ.



10 Բուլ.

Смисл Каравранъ ( ~~Коп~~ )  
русское Росс. Императ. Генерал. Командир

ԿԵԴՐՈՆ.  
преданъ 3 годамъ  
ԱՆՃԱՄԱՆԱԿ յանձնարարութեանց համար գոհացուցիչ զեղջ: 50%

« Ազգային գրադարան



NL0327381

15,630

